

բանասիրականին, որ մեծ մասամբ իրաւացի է զորված և կաւեղացնէր որ ԲԱՌՈՒՄԻ կոմիտեաները, բայց մի քանի պարոններով, Կոմիտայի գնացած հայ երկտասարդներ են, որոնք ոչ միայն զբաղման ապահովութիւն չունեն, այլ և ոչ մի տեղ հաւատարմութեամբ ծառայած և գործած չեն: Մենք միտք չունենք ոչոքի պատկին դիպելու, այլ յայտնում ենք որ Կոմիտեան հաստատութիւնները առեւտուրը ձեռնարկածն են որ նախանշելի վաճառականներին ձեռքում չէ: Լաւ կը լինէր, որ աւելի մեծ դրամատէրներ ձեռք առնէին այդ առեւտուրը և յարաբերութիւններ սկսէին արտասահմանեան վաճառատներին հետ:

Մեր թղթակիցը ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՈԼԻՏ ԴՐՈՒՄ է մեզ սեպտեմբերի 21-ին, որ այդ քաղաքում եղանակը թէ և շարունակում է պարզ լինել, բայց սաստիկ քամիներ են լինում, որի պատճառով բարձրանում է փողոցներում անտանելի փոշին: Ալեքսանդրապոլի հայոց դպրոցներին հողաբարձուները, ինչպէս հաղորդում է նոյն թղթակիցը, արդէն ընտրված են:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՅՈՒՆԱՍՏԱՆԻ ԵՐԿՐԱՇԱՐԺԸ

Օգոստոսի 15-ի երկրաշարժի մի անջնջելի աղետ էր ամբողջ Յունաստանի համար: Աթէնքը մոռացել է այդ ծանր տպաւորութեան տակ իր քաղաքական դերը և ձգտումները, որոնց համար յոյս աղբը մի քանի ամիս առաջ գէշերը ձեռքին հանդէս էր եկել: Բալկանի գործերը աւելի և աւելի են խճճվում. բայց Յունաստանը հեռու է մնում, և ստիպված է կենտրոնանալ իր ներքին թշուառութիւնների վրա: Յունաց պատմութեան մէջ գուցէ չէ եղել մի այնպիսի աւերող երկրաշարժի յիշատակութիւն, որպիսին եղաւ վերջին երկրաշարժը: Մի քանի րոպէի մէջ երկրաշարժը աւերակ դարձրեց հազարաւոր անձր գեղեցիկ քաղաքների մէջ: Ամենածանր կերպով վնասվեցան Մեսսենիա, Էլիս և Արկադիա նահանգները: Փառաւոր Պերքոս քաղաքը աւերակների կոյտ է ներկայացնում. գրաւիչ Ֆիլիստինի շատ քիչ բան է մնում: Կատակոյծնա նաւահանգիստը տխուր պատկեր է ներկայացնում: Մինչև անգամ Օլիմպիա քաղաքի մէջ տաճարների գեղեցիկ շինու-

մանցիկ պ. Լէյստին. «Ամեն մարդ իրաւունք ունի յիմար լինելու, բայց իմ հայրենակիցները ի չար են գործածում այդ իրաւունքը»:

Ինչ որ վերաբերում է «Մշակին», մենք բոլորովին հարկաւորութիւն չունենք քողարկել մեր խօսքերը, որպէս զի չը կրնանք թել մեր խօսումները «pro domo suo». Մենք ամենամեծ վստահութեամբ կարող ենք ասել որ «Մշակը» առաջ կային հայերի մէջ ամապիրտներ աւելի կամ պակաս աշտուղութեամբ իրանց կոչմանը ծառայող, բայց 1872 թվից առաջ, այն է «Մշակի» երեսուց առաջ հայերի մէջ, մանաւանդ ուսման հայերի մէջ, չը կային լրագրիչներ: Եթէ հրատարակված գրքի մէջ խօսվէր միայն հայ գիտնականների, հայ քննաստեղծների մասին, շատ անհիմն և անարդար բան կը լինէր պահանջել որ նոյն գրքում խօսվէր «Մշակի» մասին: Բայց երբ որ ընթերցողը տեսնում է նոյն գրքի մէջ մի յօդուած յատկապէս հայոց լրագրութեան անմասն, «Das armenische Zeitungswesen», որի մէջ գիտնաբեր չէ յիշված այն լրագրիչը, որ հիմնել է, գոնէ ուսման հայերի մէջ, այդ «Zeitungswesen», բառի նշող, լրագրական մտքով, հիմնել է լրագրութիւնը, այդ տեսակ վարմունքին ուրիշ անուն չէ կարելի տալ, բայց անբարեխղճութիւն: Յունովարի 1-ին 1872 թվի հայը առաջին անգամ տեսաւ մի հայերէն քաղաքական-գրական թերթ հասկանալի աշխարհաբար լեզուով, որ առաջին անգամ ունէր առաջնորդող յօդուած, ներքին տեսութիւն, զիտաւորապէս տնտեսական բովանդակութեամբ, ներքին լուրեր, արտաքին քաղաքական տեսութիւն, բանասիրական, ֆիլիսոփայական, խառն լուրեր, և բացի սրանից, ի հարկէ շատերին անհամակրելի, բայց որոշ ուղղութիւն, որոշ profession de foi.

Իսկ երբ ցոյց տրվեցաւ օրինակը, այնուհետև հեշտ էր ուրիշներին նմանողութիւն անել. — և ձեռք, դիրքը, բաժինների դասաւորութիւնը փոխ առնել և առաջնորդողներից օրինակ վերցնել. նոյն իսկ լրագրի ճակատը, կողքերին խմբագրական պայմաններով նմանեցնել, ֆիլիսոփայական

թիւններից շատերը վնասված են: Ստորերկրեայ զարկերը զգալի եղան դիւրեւ ժամանակ. և այդ պատճառով մարդկային գոհերը շատ եղան, որովհետեւ մարդիկ տեսնում էին այդ դժբաղդ միջոցին: Սպանվածներին թիւը 300-ից աւելի է. ծանր վիրաւորվածները աւելի քան 600 են: Ամբողջ ընտանիքներ թշուառացան փրատակների տակ: Վնասվածները միւս օրը մնացին առանց տան և առանց պարտքերի միջոցների: Բաւական չէր երկրաշարժի տուած վնասները, հայի պակասութիւնը և սովը միանգամայն անտանելի դարձրին շատերի դրութիւնը: Կառավարութիւնը անմիջապէս կարգադրեց օգնել թշուառներին: Տեղական կառավարութիւնները սկսեցին բաժանել հաց: Տեղի գրվածները ստանում են տախտակներ, ժամանակաւոր բնակարաններ չինելու համար: Ձեռք են առնված միջոցներ՝ ապահովեցնելու վնասվածների ապագայ դրութիւնը: Ազգայնականութեան յուսահատութիւնը դեռ մինչև այժմ էլ շարունակվում է:

ՆԱՍԱԿ ԹԻՒՐԳԻՍԵՅԻՑ

Կ. Պոլիս, 16 սեպտեմբերի

Կրնանք ըսել արդե՞ր—վերջապէս ջնմ կարծեր: Խնդիրը պ. Պէկեանի խնդիրն է. ութը տարուան հարց մը. անգլան տոկոսներին: Սակայն այդ հարցին ներքե զօղարկված է Ներսէս Պատրիարքի դէմ խօսելու պատրուակը: Երկրորդը քողարկում է նոր սերունդ մը հասած է: Երբ մեր պատգամաւորը կը վերադառնային Պերլինէ—բացի խորէն սրբազանէն—մի օր Ազգ. Ժողովուրդի մէջ պ. Պաղէտ Պէկեան կը յայտարարէ թէ Ներսէս Պատրիարքը դաւաճանած է աղբին դէմ ծածուկ կերպով և թէ զայս հաստատելու համար տօքիւ մանրէր ունի ձեռքը: Ժողովը ապշեցաւ, ժողովուրդը գայթակղեցաւ: Ներսէս Պատրիարքը պահանջեց, որ պ. Պէկեան յատենի Ազգ. Ժողովուրդը: Նոր օրը արժանաւորութիւնները: Պ. Պէկեան ուղեւոր էր քաղաքի Գանձաւորութիւնը մը լինի. Պատրիարքը դիմադրեց, ուղեւոր որ ամէն ինչ անհերք է լինի: Պ. Պէկեան բեմի ելաւ. պարզեց իւր քաղաքական տեսութիւններն, և իւր դօքտրինան ներկայեց խորէն սրբազանի անձնական մէջ նամակը, որուն մէջ սրբազանը մի քանի դիտողութիւններ արած էր: Այդ օրն ամեն ոք համոզուեցաւ թէ

գրեւոր ձեռք, տեղեկացուցը, բովանդակութիւնը վերաւերել իսկ «Մշակի» 14 տարվայ ընթացքում յարուցած մտքերը, գաղափարների արժէքը և ուրիշ լրագրիչներին նրա մասնակցութեամբ Ներսէսի գնահատելը, այդ կը կատարի ապագայ հարց:

Մի բան յանկարծ յիշեցնեմ. պատմում են որ Ֆրանսիայի մի հարաւային նահանգում կանայք քանի ջահիլ են, բոլորը դէմքով միմեանցից տարբեր են, բայց հենց որ պատաւում են հաստանում են, վերելի շրթունքի վրա բխելու են բռնում և բոլորը սկսում են այն աստիճան միմեանց նմանվել, որ մէկը միւսից դժուար է լինում ջոկել: Մեր գործող ինտելիգենցիան էլ քիչ նման է յիշեալ նահանգի կանայցի ֆանի որ երիտասարդ են, մանաւանդ երբ ուսումը նոր են աւարտել, կարծես թէ միմեանցից տարբերում են: Բայց հենց որ հասակը առնում են, խորատուղում են ասիական միջոցներով մէջ, բոլորը միմեանց սկսում են նմանվել, բոլորը մոտենում են Պետրոս Սիմոնեանցի և զօգուտ Շիշմանեանի տիպին, բոլորը սկսում են մի և նոյն հնչել: Նիմենցիները» ասել, բոլորը սկսում են իրանց մտքերը յայտնելու և հակառակորդների դէմ վիճելու մէջ մի և նոյն ձեռքը գործածել. հասակը էր, լեզու չը գիտէր, ոչ ոք ձեռք չէ ճանաչում, հայոց կեանքը, հայերի պահանջը չէր հասկանում, հայոց պատմութիւնը չը գիտէր, ոչ մի տեղ Եւրոպայում ձեռք չէր ճանաչում և այլն...

Հակառակորդին հասարակաց կարծիքի աչքում ստորագնելու նպատակով ասիացի մարդը պէտք է հերքի հակառակորդի ամեն արժանաւորութիւնը, պէտք է հերքի աղբին մատուցած նրա բոլոր ծառայութիւնները: Բուն ասիացի լինելով ձեռք հակառակորդի արժանաւորութիւնը ստորագնելու համար պէտք է համեմատել նրա թերթը մի այնպիսի թերթի հետ, որի անունը արտասանելը ինքները միշտ ամօթ էին համարում, պէտք է ասէր որ նոյն իսկ այդ ամօթալի թերթն էլ մրցում է ձեռք հակառակորդի թերթի հետ...

Պ. Արզար Գովհանիսեան. անկողնապահու-

ինչքան անհիմն էին պ. Պէկեանի ամբաստանութիւններն: Բայց այս դէպքերը երկար տեւեցին, մեծամեծ չարիքներ պատճառեցին ազգին, որոց մասին գրած եմ ժամանակին: Ազգ. Ժողովը որոշեց, որ պ. Պէկեան ներում խնդրէ հրապարակաւ: Ազգ. Ժողովուրդը նախագահ սրբազանէն: Պ. Պէկեան այս վճիռը չընդունեց և հրաժարեցաւ: Սակայն Ներսէս պատրիարքի հակառակորդը միշտ այս խնդիրը վառ կը պահէին և չը հանդարտեցան յետ նրա մահուան իսկ: Ժամանակ առ ժամանակ—և ընդհանրապէս արևադարձներուն կը պատահէր—իր անհիմնութիւնը կը կենդանանայ այդ խնդիրը: Օր մը պ. Պէկեան երեսփոխան ընտրուեցաւ Պոլսոյ մէջ թաղէն և ահա այդ օրէն վէճը սաստկացաւ: Ներսէս Պատրիարքի մահը, կաթոլիկոսական խնդիրը քննարկեցին այդ հարցը, բայց թեթեւեղեան վիշապը վերստին արթնցաւ. պ. Փափազեան ճարտար կերպով մը ինքիւրը յուզել տուաւ: Գարութիւնը սրբազանին, ապահով լինելով որ Պատրիարքն ու Ներսէս ի հարկէ կը բերեն Ժողովին տեղեկագիր մը նպատաւոր Պէկեանին: Ուրբաթ օր, սեպտեմբերի 12-ին, Ազգ. Ժողովուրդը առաջին խնդիրն այդ եղաւ: Պատրիարքը կը հաղորդէ Ժողովին թէ Ներսէս սրբազան արդէն ներած էր Պէկեանի, հետեւեալ խնդիրը փակուած է, մանաւանդ որ մինչև ցարդ պ. Պէկեանի Ազգ. Ժողովին դուրս մնալը բաւական պատիժ մը համարելու է:

Վիճաբանութիւնը սկսան—և ինչ բանի համար չենք վիճաբանել—Պ. Գուրգէն յայտնեց իւր բարձր դոգման կողմէն, որ Պատրիարքը իրեն կարծեացն համակարծիք է: Պ. Փափազեան կողմէր, որ այս խնդիրը փակուի, ժամանակ չը կորցնէ աղբը—ինչ խոճարար մարդ: Վերջապէս Ժողովը առանց քուէարկութեան կը ներէ պ. Պէկեանի ի նկատի առնելով նրա զղջումը իւր գործած յանցանքներուն համար:

Վեհանք էր, շատ վեհանք Ազգ. Ժողովը. սակայն կարելի չէր հարցնել թէ ո՞վ կը ներեն: Միթէ պ. Պէկեան ըսած էր թէ ինքը զղջացած է, միթէ նա խնդրած էր ներում, որ Ժողովը ներէր: Բայց վերջապէս չնորձ ընելու մասին խստապահանջութիւն կարելի չէ: Ազգ. Ժողովը արձայնակալ չնորձեր կընէր. խնդիրը պիտի փակուէր. Ներսէս վստահութիւն կուտար: Փակուեցաւ Բայց ասն այս առաւօտ պ. Պէկեան, որ պարզապէս Պէկ կը ստորագրէ, այժմ—նամակ

թեան մէջ գոնէ օրինակ առնելք «մի կօպիտ առիպուց» որ թէ և ասիացի է, բայց ձեռքներից աւելի եւրօպացի է իրան ցոյց տալի. նա մասնաւորեց է անուով ձեռք և ձեռք Լէյստին գրական անբարեխղճութեամբ էր ներում, որ Ժողովը ներէր: Բայց վերջապէս չնորձ ընելու մասին խստապահանջութիւն կարելի չէ: Ազգ. Ժողովը արձայնակալ չնորձեր կընէր. խնդիրը պիտի փակուէր. Ներսէս վստահութիւն կուտար: Փակուեցաւ Բայց ասն այս առաւօտ պ. Պէկեան, որ պարզապէս Պէկ կը ստորագրէ, այժմ—նամակ

Պ. Գովհանիսեան. դուք որ ուրիշ շատերն ընդման ցոյց էր տալիս ձեռք կրօնի և եկեղեցու պաշտպան, դուք դիմեք որ քրիստոնեան, երբ գնում է եկեղեցի քրիստոնեական ամենամեծ խորհուրդն ընդունելու, ճաշակելու և հաղորդութիւն ընդունելու,—նա նախ հաշտվում է իր բոլոր թշնամիների հետ, ամենքից ներողութիւն է խնդրում, իր կրքերը մոռանում է...

Գուր յանձն էր առել, ձեռք կարծիքով մի շատ մեծ, շատ նշանաւոր գործ. անկողնապահ կերպով, անկեղծ զգացմունքով ներկայանալ Եւրօպայի գիտնական, Եւրօպայի մտքի առջև, Եւրօպայի քաղաքակրթութեան առջև և ծանօթեցնել Եւրօպային հայ մտաւոր, բարոյական և հոգեկան շարժման հետ, ներշնչել եւրօպացի մտածող մասի մէջ սէր և յարգանք դէպի հայը: Եւ փոխանակ այդ սրբազան գործը կատարելուց առաջ, ինչպէս մի խորհուրդ ընդունելուց առաջ, հաշտվել ամենքի հետ, ներողութիւն խնդրել ամենքից, անկողնապահ լինել նոյն իսկ դէպի ձեռք թշնամիների արժանաւորութիւնները,—դուք գնում էք այդ տեսակ նշանաւոր արշաւանքը, ձեռք գրով Եւրօպայի առջև գովելու մտքով, ձեռք ձեռք նշանակութիւնը փոխելու, բարձրացնելու դիտաւորութեամբ, իսկ ձեռք չը սիրած գործիչները սրան նրան անտես առնելու, սրա նրա նշանակութիւնը նսեմացնելու, ստորացնելու դիտաւորութեամբ: Այդ տեսակ քայլն անելուց առաջ պէտք է թողնել ձեռք կրքերը Թիֆլիսում և մի վարձված Լէյստին միջոցով ձեռք ասիական կրքերը չը պէտք է տեղափոխել Լայպցիգ:

Գուցէ դուք էլ մեր ուրիշ կարճատես գործիչ-

մը կը խրկէ «Արեւելքի» և կը հարցնէ թէ ո՞վ ըսած է Պատրիարքին, ո՞վ ըսած է Ներսէս Եփեսոսիին թէ ինք զղջացած է: Ո՛չ, ինք չէ զղջացած, այլ Ներսէս Պատրիարք զղջացած է (!):—Գիշ մ'ալ և պ. Պէկեան պիտի ըսէր թէ Ներսէս Պատրիարք իրեն ներում խնդրած է:

Ի հարկէ, այդ նամակին վրայ խնդիր կը փոխուի և Աստուած միայն գիտէ թէ որքան ժամանակ պիտի դառնի վերստին այդ խնդրով իբր թէ ուրիշ գործ չունենք:

Ազգ. Ժողովը ուրբաթ առուր նստին մէջ ի միջի այլոց զբաղեցաւ նաև Պատրիարքարանի ելմը—տացոյցի խնդրով: Բաւական կանոնադր նիստ մը, յորում քննարկեցին երեսփոխանը թէ ինչ ծախքեր պիտի ունենայ երկու տարուան մէջ Պատրիարքարանը:

Այդ քննութեան միջոցին երբեմն այնպիսի պարզամտութիւն երևան կուգար որ մարդ չէր կարող զսպել ծիծաղել: Օրինակի համար, երբ Պատրիարքարանի թղթերին ծախուց յատկացեալ գումարին վրայ կը խօսուի, երեսփոխան մը կը փափազի որ յատկացեալ գումարը կէս առ կէս նուազի, իբր թէ թուղթ, գրիչ, մեկն սպառի կարելի լինի ժամանակ դառնել և դալ Ազգ. Ժողովին նոր վարկ ստանալ:

Պատրիարքարանի նորոգութեանց ծախսն ալ ուղեցին զեղջիլ, բայց պատասխան տրուեցաւ թէ երբ անձրեւն չուր կը վաղէ ներս այդ տախտակէ խաբուով չենքէն, կարելի չէ սպասել որ Ազգ. Ժողովը վարկ տայ:

Այսպիսի մի քանի նկատողութիւններ ընելով հանդերձ կրնանք ըսել գոհացուցիչ նիստ էր և Պատրիարքարանի մատակարարութիւնը կանոնաւորելու հոգն անհերք էր—Աստուած չամչցնէ:

Նորութիւն ոչինչ ունենք: Արդե՞ր նորութիւն կը սեպէք, եթէ ըսնք Պատրիարքարանի կողմանէն ու և է անձ չը ներկայացաւ Անգլիոյ թագուհին որդոյն, որ Պոլսոյ այցելեց—Իբր թէ քաղաքականութեան կը դպչի:—Ատեն մը անտես չէին անցնել այնպիսի այցելութեան: Երբ անգլիական նաւատորմի ուրիշ հրամանատար մը այցելեց Պոլսոյ Ներսէս Պատրիարք իւր հետն ունենալով հակահաստանեանց և բողոքական հայոց ներկայացուցիչներն միասին այցելեց պ. Ժովհանիսեան: Ներկայ պարագային մէջ չենք զարմանար:—Մեր արդի պաշտօնեաներն ուրիշ բան չէինք ստանալ: Հայկակ

Ների շատերի պէս կառարկէր որ ամեն ուղղութեան հետ կարելի է ծանօթացնել Եւրօպային, բայց «Մշակից», որի ուղղութեան նշանաբանները մէկն էլ է հայերի պակասութիւնները ցոյց տալ: Բայց կարող ենք ձեռք հաւատացնել որ Եւրօպան աւելի էլ կը յարկի մի աղբի ինքնաքննող, ինքնամտաւոր ուղղութիւնը և կը վերջացնէր մեր խօսքը այն մարդու, Նազարեանցի բառերով, որի նշանակութիւնը մեր գործունեութեան ամբողջ ընթացքում մեր աւելի խմցանք գնահատել քան թէ դուք:

Հինչպէս մասնաւոր մարդու, նոյնպէս և ժողովրդի մէջ, հոգու ճշմարիտ մեծութիւնը այն բանի մէջ է, որ նա խոստովանում է իր պակասութիւնը, որովհետեւ թաղուցանել նրանց սեփական է միայն բարոյապէս աւելված բնաւորութիւնների (Ստ. Նազարեանց):

Վերջապէս ինչ որ վերաբերում է Գովհանիսեանին այն խօսքին թէ Գրիգոր Արծրունի յայտնի չէ Եւրօպայում, մենք կը պատասխանենք որ յանձն առնելով հայոց լրագրի հրատարակելու և տարիների ընթացքում այդ գործը առաջ տանելով, մեր նպատակն էր հայերի համար գործել և ոչ թէ հռչակել Եւրօպայում:

Հռչակվել Եւրօպայում—մենք թողնում ենք Արզար Գովհանիսեանին և Արթուր Լէյստին, որոնք կարող են որքան իրանց քեֆը կը տայ միմեանց փոխադարձապէս գովել ու հռչակել մէկը, Լէյստը, թող որքան իր քեֆը տայ «Կուլտուրական ժամանակակցութեան ամբողջութիւն» անուանի ամբողջ, ոչինչ ուղղութեան չունեցող, անկողնապահ միամիտ ժողովաւոր «Փորձը»,—իսկ միւսը, Գովհանիսեան, զրա փոխարէն որքան սիրտն ուղէ անուանէ Լէյստին «մեր հռչակաւոր հայադէպ»:

Այդ տեսակ անմոլ «Privat Vergnügen» մենք այդ երկու պարոններին մեծ ուրախութեամբ թողնում ենք, ազատ թողնելով նրանց փոխադարձ հռչակման լայն ասպարէզը:

Գ. Ա.

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐՆԵՐ

—Մարդիկընց հեռագրում են, որ Գարեգին սպանիական զինուորի փորձեր է անում Ֆրանսիայից արտաքսել տալու Ջորջիային և միևս սպանիական հանրապետականներին, որոնք պատասխարկել են Ֆրանսիայում Գերմանիան աշխատում է յաջողեցնել այդ միտքը։ Սպանիական կառավարությունը դժգոհ է, որ Ֆրանսիական արմատական մամուլը համակրանքով վերաբերվեցաւ դէպի Մարդիկընց զինուորական ապստամբությունը։

—Լոնդոնից հաղորդում են, որ ցանկություն կայ պարլամենտի նստաշրջանը բանալ յունվարից, բայց կարծում են որ իրլանդական հողային խառնակությունները և արևելեան խնդիրը կը ստիպեն պարլամենտի պարապմունքները սկսել ոչ ուշ հոկտեմբերի 30-ից։

—Լոնդոնում տեղեկություններ են ստացված, որ իբրև թէ Չանդլերսոնը հրամայված է սպանել բոլոր անգլիացիներին, որոնք գտնվում են այդ երկրում, և նոյն իսկ այն տեղացիներին, որոնք ընդունել են քրիստոնեությունը։

—Փոքր-Ասիայում չինվելի երկաթուղու մի գիծը կանցնի դէպի Պարսից ծոցը, կապ ունենալով Կիսրեբեդի, Բաղդադի և առհասարակ նշանաւոր քաղաքների հետ։

—Սեպտեմբերի 16-ին Պոլսում նկատելի եղաւ երկրաշարժ։

—Աֆրիկայի հիւսիսային կողմերում, Նեղոսի ափերում, ինչպէս հաղորդում են խարտուրից, սով է ընկել։

—Պէշաւից հաղորդում են, որ այնտեղի զօրանոցներում խօսքերա երեքեցաւ։

—Նիւ-Եթովպիայում աղաւթ է արձան և բացումը տեղի կունենայ հոկտեմբերի 16-ին։

—Սերբիական արմատական լրագրիւններից մէկը խափանվեցաւ, և խմբագիրը, որ դատապարտված էր բանտարկութեան, ստիպվեցաւ փախչել իր հայրենիքից։

—«Հալասի գործակալութեան» տուած տեղեկություններից երևում է, որ Էդինբուրգի դքսի Պոլս գնալը չէ ունեցել սպասած հետեանքը, մինչև անգամ սուլթանը իր բռնած դիրքով մի տեսակ սառնություն է ցոյց տուել դէպի իր քաղաքական հիւրը։ Այդ բանը լաւ տպաւորութիւն չէ թողել Անգլիայում։

—Սեպտեմբերի 18-ի ունգարական պատգամաւորական ժողովում Տիսայի արած յայտնությունները, որոնք վճռական բնաւորութիւն ունեին և ցոյց են տալիս որ Աւստրո-Ունգարիան չի թող տալ խախտել Բերլինի դաշնագիրը,—մեծ տպաւորութիւն են թողել և աղմուկներ յարուցել։

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՍՏՈՐԻԱԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

ՍՕՖԻԱ, 24 սեպտեմբերի ֆոխանակ Օրիսանիէից ուղղել Պրեվիսա գնալու, գնեալով կառուրար գնաց Վրացա, որտեղ փոքր ժամանակ առաջ ուղարկված էր Յանկով, և որտեղ մնացել են նրա կողմնակիցներից շատերը։ Բնակիչները մի խումբ, որ ընդունեց գնեալով կառուրարին, հաւատարմութիւն արտայայտեց դէպի Ռուսաստանի հովանաւորութիւնը։ Գնեալով պատասխանեց նոյն մտքով, ինչ մտքով որ խոսեց Օրիսանիէում, այդպէսով որ անհրաժեշտ է յետաձգել ընտրութիւնները և ազատել ձերբակալված սպաններին։ Այժմ գնեալով կառուրար գտնվում է Պրեվիսայի ճանապարհի վրա։ Սօֆիայում, ինչպէս ամեն տեղ, պատրաստվում են ընտրութիւններ անելու։ Ռուսաց դիպլոմատիական գործակալ և բազմաթիւ միւսները նշանակված ժամանակից մի շաբաթ էլ յետաձգել ընտրութիւնները, ըստ երևոյթի դրական հետեանք չունեցաւ։

ԿԻՐՆՇՏՍԿԻ, 25 սեպտեմբերի։ Մեծ խլիւսն Ալեքսանդր Միխայովիչ ուղեորվեց «Բիւրգա» նաւով երկար ծովային ճանապարհորդութիւն անելու համար։

ՍՕՖԻԱ, 25 սեպտեմբերի։ Այս օրերումս պատերազմական միւսիստը, կանչելով իր մօտ Սօֆիայի բերդապահ գնդի սպաններին, վճռողապէս խորհուրդ տուեց նրանք կատարելապէս հեռու մնալ քաղաքականութեան մէջ խառնվելուց։

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

Կովկասի ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՐՈՒԹԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՐԴԸ յայտնում է ի գիտութիւն ընկերութեան պ.պ. անդամներին, որ առաջիկայ կիրակի, սեպտեմբերի 28-ին, առաւօտեան 11 ժամին նշանակված է ընկերութեան ընդհանուր ժողովը Մարիաման-Յովնանեան ուսումնարանի դահլիճում, քննելու համար Ընկերութեան 1885 թւականի եկամտից ընդհանուր հաշիւը։

1—1

ԵՐԴՈՒՆԵԱԼ ՀԱՄԱՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ Ս. Վ. ԶԵՄԵՍՈՎ
Տեղափոխվեցաւ Սօլջակի, ՎՕՁՆԵՍԵՆՍԿԱՅԱ փողոց, տուն № 8, Տէր-Մովսէսեանի։

2—3

Թիֆլիսի պ. Նահանգապետի առաջադրութեան հիման վրա, Թիֆլիսի ԱՌԵՏՐԱԿԱՆ ՎԱՐՁՈՒԹԻՒՆԸ հրաւիրում է առաջին և երկրորդ գիւղիայի վաճառականներին ներկայ լինելու ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻՆ, որը տեղի կունենայ այս սեպտեմբերի 28-ին, կիրակի օրը, առաւօտեան 11 ժամին, վարչութեան ընակարանի մէջ (նախկին Արժրուհու դպրեւան) քննելու վարչութեան և անկախ զաւթիւմ չոր հրահանգները, որը, դրանից յետոյ, անմիջապէս կը ներկայացվի իշխանութեան հաստատութեանը։

2—2

Մի երիտասարդ, որ ունի ՈՒՍՈՒՑՁՈՒԹԵԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ, ՅԱՆԿԱՆՈՒՄ Է ՊԱՇՏՈՆ ՈՒՆԵՆԱԼ ՀԱՅՈՑ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ։ Կը դասախօսի ՌՈՒՍԱՑ ԼԵՋՈՒՆԻՑ, ՌՈՒՍԱՑ ՊԱՄՏՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ՌՈՒՍԱՍԱՆԻ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ։ Պայմանները մասին դիմել «Մշակի» խմբագրութեանը։

2—3

ՍՈՒՐԲ-ԽԱՉ քաղաքի հայոց օրիորդաց ուսումնարանի համար հարկաւոր է ՄԻ ՎԱՐԺՈՒՆԻ։ Յանկացողները պայմանների համար պէտք է դիմեն «Մշակի» խմբագրութեանը։

3—3

ՊԵՏԵՐԲՈՐԳԻ ԲՈՇԿԱԿԱՆ ԲԱԺՆԻ ԿՈՂՄԻՑ ԹՈՅԼՈՒԹԻՒՆՆԵՐ ՄՍԱՅԱՒ ՀՆԴԿԱԿԱՆ ՄԿՆԴԵՂ

ՄԻՇՈՒՆԱՑ



ՄԵՇ ԵՒ ՓՈՔՐ ՄԿՆԵՐԸ կատարելապէս ոչնչացնելու համար Արկղիկի գինը 1 ր. 50 կ. Արկղիկի 1/4 արծէ 60 կ.։

Հեղուկ բաղաւոր ջն երկու դէմ։ Սրուակի գինը, վրձինով միասին 1 րուրի։

Լուս, ցեց, բողոճ ոչնչացնելու փոշի։ Գոլիսաւոր պահեստ ԹԻՖԼԻՍՈՒՄ գտնվում էՎ. Գրիվնակի դեղատան ապրանքների մագազինում, «Լոնդոն» հիւրանոցի տակ, Զուբալովի տանը։

Իրս. Գուտման 17—100

ԹՈՅԼՈՒԹԵԱՍԲ Ս. ՊԵՏԵՐԲՈՐԳԻ ՄԱՅՐԱՔԱՆԱԿԻ ԲՈՇԿԱԿԱՆ ՎԱՐՁՈՒԹԵԱՆ

Էլէկտր-Меланже.

Մազերի արագ և առատ բուսացնելու համար և նրանց պահպանելու թափվելուց։ Գինը 2 ր. սրուակի համար, գործածութեան հրահանգի հետ միասին, ուսուսերէն, ֆրանսերէն և գերմաներէն լեզուով։



Բալզամ—Eugénie. զափնեա և պսակի փոսնի ծաղիկներից, երեսին, շլինքին և ձեռքերին քնքշութիւն և փափկութիւն, նոյնպէս և մարմարի։ Ենի սպիտակութիւն տալու համար, շուշանի և վարդի անուշահոտութեամբ, նոյնպէս կաշու անհարթութիւնը և բիծերը ոչնչացնելու գինը 1 ր. 75 կ. սրուակի համար, գործածութեան հրահանգով ուսուսերէն, ֆրանսերէն և գերմաներէն լեզուով։

Կարմրադեղ—Eugénie. հեղուկ, թուրին և ակահոններին բնական վարդի գոյն տալու, որ չէ փոխվում էլէկտրական լուսաւորութեան ժամանակ և որ չէ սրբվում երեսի քրտնիքից։ Առաջարկվում է մանաւանդ թատրոնների և պարահանդէսների համար։ Գինը 1 ր. 50 կ. սրուակի համար, գործածութեան հրահանգով ուսուսերէն, ֆրանսերէն և գերմաներէն լեզուով։

Այդ բոլոր երեք կոսմետիկական արդիւնքները բժշկական վարչութեան վկայութեամբ, չեն պառնակում իրանց մէջ որ և է մնասական նիւթեր։

ԱՐՏՈՒՆԻԹԻՆ ՄՍԱՅԱՒ ՊՈՄԱԴ

Իսկական «Pasta Eugénie», գերազանց միջոց կաշու ամեն տեսակ բծերի, և երեսի վրա պատահող ուրիշ անարթութեան երևոյթների դէմ։ Տալիս է երեսի գոյնին երիտասարդական թարմութիւն և գեղեցկութիւն։ Գինը մի սրուակի համար 1 ր. 60 կ.։

Ֆինին-գլիցերինեան պոմադ պերուական բալզամից, մազերը պնդացնելու, խոտացնելու և մեծացնելու համար։ Գ. 2 ր. սրուակի համար։

Ձեռքերի պոմադ։ Գինը սրուակի համար 1 ր. 30 կ.։ Խրաքանդիւր սրուակի վրա գտնվում է պաշտպանողական դրոշմ, մի «Երեւոյթ» և հնարող ստորագրութիւն «Bertha Ries».

Իսկական «Poudre-Eugénie» սպիտակ և վարդագոյն փոշի։ Գ. արկղիկի, վրձինով 1 ր. 50 կ. առանց վրձինի 1 ր. 20 կ.։

Մազերի ներկը երեք գոյնի. սև, շագանակագոյն և բաց-շէկ. Գ. արկղիկի 3 ր. Ներկը «Իրս Գուտմանի» գործարանին։

Գլխաւոր պահեստ ԹԻՖԼԻՍՈՒՄ գտնվում էՎ. Գրիվնակի դեղատան ապրանքների մագազինում, «Լոնդոն» հիւրանոցի տակ, Զուբալովի տանը։

65—100

Այս տարուայ օգոստոսի 1-ից բացուեցաւ Թիֆլիսում (Միքայէլեան կամուրջի վրա №2 և 30)

ՆՈՐ-ԳՐԱՎ ԱՃԱՌԱՆՈՑ

ԴԱՍԱԿԱՆ ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ՊԵՏՈՑԻՆԵՐԻ ԲԱԺԱՆՄՈՒՆԻՔՈՎ

ՆՈՐ-Գրավաճառանոցում վաճառվում են ամեն լեզուներով դասական և ընթերցանելի, անկազմ և կազմած գրքեր (հատարակ կազմ 15 կ. իսկ կաշէ կազմ 30 կ.)։

Դասական պիտոլոններ՝ տետրեր, քարէտախտակներ, քարտէզներ, մատիւներ, դրիւներ, գրչակներ, թանաքամաններ և այլն։ Տետրերը և քարէտախտակները լինում են տողած և անտող։ Պատուիրողները մեծութեան և փոքրութեան հետ պէտք է որոշեն գծի տեսակները։

Գրավաճառանոցը ընդունում է ամենայն տեսակ գրքեր՝ կոմիսիայով վաճառելու համար։ Ամեն տեսակ լրագրի և յայտարարութիւնների ստորագրութիւն (թէ տեղական և թէ Ռուսաստանի), տպագրական և կաղնարարական յանձնարարութիւններ և զանազան տեղեկութիւններ գրքերի և դասական պիտոլոնների վերաբերութեամբ։

Պատուէրները կատարվում են շուտ և ամենայն ճշգրտութեամբ։ Թիֆլիսում տպած գրքերի և դասական պիտոլոնների գումարով գնողներին զիջումն է լինում։

Ճանապարհածախսը գնողների վրա է։ Պատասխանի համար պէտք է 7 կոպէկանոց փոստի մարկա ուղարկել։

Օտար քաղաքներից դիմում են. Тифлисъ, «Новая Книжная Торговля», на Михайловском мосту, №29 и 30.

7—15

ԲԱՐՁՐ ՏԵՍԱԿԻ

ՊԱՐՖԻՄԵՐԻ

ԲՐՈՎԱՐ ԵՒ ԸՆԿ.

Ֆաբրիկայից

Որ արժանացրած է եղել բազմաթիւ մեզախների համաշխարհային ցուցահանդէսներում, կարելի է ստանալ բոլոր ամենալաւ մագազիններում

ՌՈՒՍԱՑ ԿԱՅՍՐՈՒԹԵԱՆ

8—12 (Ե)